**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 04/2022-2023

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԼԲԵՐՏԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 20 փետրվարի, 2023 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի, Լ. Ալեքսանյանի, (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Խաչատուր Ալբերտի Սուքիասյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 22-ին հարուցված թիվ 04/2022 վարույթի նյութերը.

*պարզեց.*

### *I. Նախապատմություն*

1.Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և հաշվի առնելով Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության 2022 թվականի աշխատանքային ծրագրով հաստատված միջոցառումներով նախատեսված՝ Հանձնաժողովի կողմից Ազգային ժողովի պատգամավորների անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգման շրջանակում իրականացված Խաչատուր Ալբերտի Սուքիասյանի 2021 թվականի

տարեկան շահերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) ներկայացված համապատասխան տվյալների ստուգման արդյունքները, արձանագրել է հետևյալը.

- Հայտարարագրում Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը հայտարարագրել է 100 % բաժնեմասնակցություն **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊԸ-ում (ՀՎՀՀ 208/5709/1009, այսուհետ՝ նաև Ընկերություն), որը, ըստ Հայտարարագրում ներառված տվյալների, ձեռք է բերվել 2010 թվականի դեկտեմբերի 9-ին: Ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ Հայտարարագրում տվյալներ ներկայացված չեն: Ընկերությունը գրանցված է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

2. Խաչատուր Սուքիասյանը ստանձնել է Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը **2021 թվականի օգոստոսի 2-ին:**

3. 2022 թվականի նոյեմբերի 22-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 04/2022 որոշումը՝ Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Ալբերտի Սուքիասյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով վարույթ հարուցելու մասին:

4. 2022 թվականի նոյեմբերի 25-ին թիվ Ե-01/2940-2022 գրությամբ վարույթ հարուցելու մասին որոշումը սուրհանդակային ծառայության միջոցով ուղարկվել է Խաչատուր Ալբերտի Սուքիասյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում Ընկերությունում իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու առնչությամբ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Նշված որոշումը և ծանուցումը Խաչատուր Սուքիասյանի կողմից ստացվել է 2022 թվականի նոյեմբերի 29-ին (հիմք՝ ALO106781453AM ծանուցագիր):

5. Հանձնաժողովի կողմից 2022 թվականի նոյեմբերի 22-ի «Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» N 4/2022 որոշման կայացումից հետո, ի պատասխան Հանձնաժողովի կողմից Խաչատուր Սուքիասյանին ուղարկված 2022 թվականի նոյեմբերի 25-ի Ե-01/2940-2022 գրության՝ գրավոր պարզաբանում ներկայացնելու մասին, Խաչատուր Սուքիասյանի ներկայացուցիչ Գոռ Միքայելյանի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 5-ին Մ-5046-2022 գրությամբ Հանձնաժողով է ներկայացվել միջնորդություն՝ գրավոր պարզաբանում ներկայացնելու ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, ինչը Հանձնաժողովի կողմից բավարարվել է:

6. 2022 թվականի դեկտեմբերի 28-ին Խաչատուր Ալբերտի Սուքիասյանի ներկայացուցիչ Գոռ Միքայելյանի կողմից Մ-5467-2022 գրությամբ Հանձնաժողով է մուտքագրվել պարզաբանում (այսուհետ՝ նաև Պարզաբանում) Խաչատուր Սուքիասյանի կողմից **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊԸ-ում իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու հարցի առնչությամբ:

7. **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերությունում Խաչատուր Սուքիասյանի բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու հարցի վերաբերյալ տվյալներ ստանալու, ինչպես նաև անհամատեղելիության պահանջների պահպանման, հնարավոր այլ խախտումներ ի հայտ բերելու նպատակով ուսումնասիրվել են Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալները, Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական բաց աղբյուրներ, ինչպես նաև կատարվել են հարցումներ 2022 թվականի դեկտեմբերի 28-ին և 2023 թվականի հունվարի 12-ին Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, 2022 թվականի դեկտեմբերի 28-ին «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ին, 2023 թվականի հունվարի 19-ին և հունվարի 20-ին Պետական եկամուտների կոմիտեին:

***II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ.***

2022 թվականի դեկտեմբերի 28-ին Խաչատուր Ալբերտի Սուքիասյանի ներկայացուցիչ Գոռ Միքայելյանի կողմից Մ-5467-2022 գրությամբ Հանձնաժողով է ներկայացվել պարզաբանում Խաչատուր Սուքիասյանի կողմից **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊԸ-ում իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու հարցի առնչությամբ:

Ըստ ներկայացված պարզաբանման՝ **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերությունը հիմնադրվել է 2010 թվականի նոյեմբերի 10-ին Խաչատուր Սուքիասյանի կողմից: Այդ ընկերությունը գործել է Գերմանիայի Վեգբերգ քաղաք, Քլոսթերվեգ 14 իրավաբանական հասցեում: Ընկերությունը զբաղվել է ինտերնետային առցանց խանութի ծրագրային ապահովման մշակման և շահագործման գործունեությամբ:

2020 թվականին Covid-19 համաճարակով պայմանավորված՝ **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊԸ գործունեությունը փաստացի դադարել է: Ընկերությունը 2020 թվականից սկսած փաստացի շահույթ չի ստացել: **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊԸ-ի՝ փաստացի գործունեություն չիրականացնելու և շահույթ չստանալու փաստերը հաստատվում են ընկերության 2020 և 2021 թվականների հաշվապահական հաշվառման կարճաժամկետ հաշվետվությունների 188312/10845/2021 Գրասենյակ-Հաշվարկ V.10.39 և 188312/10845/2020 Գրասենյակ-Հաշվարկ V.9.2 փաստաթղթերով՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ:

Ընկերության հիմնադիր Խաչատուր Սուքիասյանը դեռևս 2021 թվականի հուլիսին որոշում է կայացրել նախաձեռնել **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերության լուծարման գործընթաց և լուծարել այն: Նշված փաստը հաստատվում է Խաչատուր Սուքիասյանի կողմից 2021 թվականի հուլիսի 23-ի՝ Ընկերության լուծարման և Դոկտ. Վերներ Յանսենին Ընկերության միանձնյա լուծարող նշանակելու վերաբերյալ ներկայացված որոշմամբ:

Հիմք ընդունելով **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊԸ-ի հիմնադիր Խաչատուր Սուքիասյանի 2021 թվականի հուլիսի 23-ի որոշումը՝ ընկերության տնօրեն Վերներ Յանսենը նախաձեռնել է ընկերության լուծարման գործընթացը, որը հանգում է հետևյալին.

- 2021 թվականի օգոստոսի 5-ին Վերներ Յանսենն էլեկտրոնային փոստով դիմել է Գերմանիայի օրենսդրությամբ առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթաց սկսելու իրավասություն ունեցող սուբյեկտին՝ նոտար Ուլրիկե Գիսբերցին (այսուհետ՝ նաև Նոտար)՝ խնդրելով լուծարել Ընկերությունը եկամտի բացակայության պատճառով: Նշված փաստը հաստատվում է պարզաբանմանը կից ներկայացված էլեկտրոնային հաղորդագրության քաղվածքով՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ:
- Նոտարը 2021 թվականի հոկտեմբերի 29-ին էլեկտրոնային փոստով դիմել է Վերներ Յանսենին՝ առաջարկելով կցել բոլոր պահանջվող փաստաթղթերը Ընկերության լուծարման համար: Նշված փաստը հաստատվում է պարզաբանմանը կից ներկայացված էլեկտրոնային հաղորդագրության քաղվածքով՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ:
- Խաչատուր Սուքիասյանը 2022 թվականի մարտի 1-ին կայացրել է **Նոտարի կողմից պահանջվող պայմաններին և ձևաչափին համապատասխանող որոշում՝**

**«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերությունը լուծարելու վերաբերյալ: Նշված փաստը հաստատվում է պարզաբանմանը կից ներկայացված որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ:

- 2022 թվականի մարտի 17-ին Նոտարը էլեկտրոնային փոստով նամակ է ուղարկել Վերներ Յանսենին՝ խնդրելով առևտրային ռեգիստրի գրանցումը ստորագրելու համար պայմանավորվածություն ձեռք բերել իր նոտարական գրասենյակի հետ, որից հետո 2022 թվականի ապրիլի 21-ին Վերներ Յանսենը պաշտոնապես Նոտարին է ներկայացրել Ընկերությունը լուծարելու վերաբերյալ դիմումը և բոլոր պահանջվող փաստաթղթերը: Նշված փաստերը հաստատվում են Պարզաբանմանը կից ներկայացված էլեկտրոնային փոստի հաղորդագրությունների քաղվածքներով:
- 2022 թվականի մայիսի 12-ին **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերության լուծարումը գրանցվել է Գերմանիայի իրավասու մարմնում՝ Մյոնխենգլադբախի թիվ Բ14171 Առևտրային ռեգիստրում, նշված փաստը հաստատվում է Մյոնխենգլադբախի թիվ Բ141171 Առևտրային ռեգիստրի քաղվածքով և Մյոնխենգլադբախի Առաջին ատյանի դատարանի կողմից տրված պաշտոնական քաղվածքով:

## *III. ԱԺ պատգամավորի գործունեությանն առնչվող տեղեկություններ*

Ազգային ժողովի պաշտոնական կայքից (http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=1434&lang=arm) իրական ռեժիմում ստացված տեղեկատվության համաձայն՝ Խաչատուր Սուքիասյանը 2021թ. հունիսի 20-ին ԱԺ պատգամավոր է ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով: 2021 թվականի օգոստոսի 2-ից փաստացի ստանձնել է Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը:

## *IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր*

1. Խաչատուր Ալբերտի Սուքիասյանը Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը ստանձնել է **2021 թվականի օգոստոսի 2-ին** և շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

2. Խաչատուր Ալբերտի Սուքիասյանը հանդիսանում է **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերության 100 % բաժնետեր, մինչդեռ իր բաժնեմասը օրենքով սահմանված կարգով չի հանձնել հավատարմագրային կառավարման: Նշված փաստերը հաստատվում են Խաչատուր Սուքիասյանի կողմից Հայտարարագրում ներկայացված տվյալներով, ինչպես նաև Պարզաբանմամբ ներկայացված փաստաթղթերով:

3. **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊԸ գործունեությունը փաստացի դադարել է և Ընկերությունը փաստացի շահույթ չի ստացել: Նշված փաստը հաստատվում է Ընկերության հաշվապահական հաշվառման 2020 և 2021 թվականների կարճաժամկետ հաշվետվությունների 188312/10845/2021 Գրասենյակ-Հաշվարկ V.10.39 և 188312/10845/2020 Գրասենյակ-Հաշվարկ V.9.2 փաստաթղթերով՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ:

4. **2021 թվականի հուլիսի 23-ին** Խաչատուր Սուքիասյանը կայացրել է որոշում՝ Ընկերության լուծարման վերաբերյալ, որպես միանձնյա լուծարող նշանակելով Դոկտ. Վերներ Յանսենին: Նշված փաստը հաստատվում է պարզաբանմանը կից ներկայացված Ընկերության լուծարման վերաբերյալ որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ:

5. Միանձնյա լուծարողի կողմից Ընկերության լուծարմանն ուղղված գործողություններից հետո, 2022 թվականի մայիսի 12-ին **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերության լուծարումը գրանցվել է Գերմանիայի իրավասու մարմնում՝ Մյոնխենգլադբախի թիվ B14171 Առևտրային ռեգիստրում, հիմք՝ https://www.northdata.com/?id=5381075958759424 բաց աղբյուրից ձեռք բերված 2022 թվականի մայիսի 12-ին **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերության լուծարման մասին տվյալ:

6. Հանձնաժողովը 2022 թվականի դեկտեմբերի 28-ի Ե-01/3240-2022 և 2023 հունվարի 12-ի Ե-01/46-2023 գրություններով դիմել է Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, 2022 թվականի դեկտեմբերի 28-ին Ե-01/3242-2022 գրությամբ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲ ընկերություն, 2023 թվականի հունվարի 19-ի Ե-01/116-2023 և 2023 թվականի հունվարի 20-ի Ե-01/128-2023 գրություններով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Հանձնաժողովին հասանելի

բաց տեղեկատվական աղբյուրներում, մասնավորապես՝ https://www.northdata.com/in+LOBBY+GmbH,+Wegberg/Amtsgericht+Moenchengladbach+HRB+14171 հարթակում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության են ենթարկվել **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերությանն առնչվող տվյալները:

7. Հանձնաժողովի կողմից 2023 թվականի փետրվարի 9-ին 01/241-2023 գրությամբ հարցում է կատարվել Խաչատուր Սուքիասյանին՝ Հայտարարագրում իր մասնակցությամբ ընկերությունների բաժնեմասերը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ պայմանագրերի տրամադրման վերաբերյալ, ինչին ի պատասխան 2023 թվականի փետրվարի 13-ին Մ-607-2023 մտից գրությամբ Խաչատուր Սուքիասյանի ներկայացուցչի կողմից Հանձնաժողով են ներկայացվել պահանջվող տվյալները:

## *V. Անհամապատասխանության պահանջին առաջադրվող՝ ներպետական օրենսդրական կարգավորումներ*

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածով սահմանված է, որ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, **զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ**, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2. «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված է.

«1. Սահմանադրության 95-րդ հոդվածին համապատասխան՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2. Պատգամավորական մանդատն ստանալուց հետո՝ **մեկ ամսվա ընթացքում, պատգամավորը պարտավոր է՝**

1) դուրս գալ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից,

2) ազատվել առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնից,

3) **դուրս գալ առևտրային կազմակերպություններից կամ դրանց կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման,**

4) հրաժարվել առևտրային կազմակերպությունում ուրիշի գույքի հավատարմագրային կառավարումից,

5) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոններից, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասում նշված պաշտոնների,

6) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:»:

3. Նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է նաև, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես նաև գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանք է համարվում **«Հանրային ծառայության մասին»** օրենքով սահմանված համապատասխան գործունեությունը կամ աշխատանքը:

4. ***«Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)*** 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***հանրային պաշտոնը*** դասակարգվում է խմբերի՝ **պետական** և համայնքային: Նույն հոդվածի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ ***քաղաքական,*** վարչական, ինքնավար և հայեցողական:

5. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորմամբ Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը հանդիսանում է **պետական քաղաքական պաշտոն:**

6. Օրենքի (մինչև «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 31-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները **չեն կարող** զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, **զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ**, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

7. Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում ***նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝*** **մեկ ամսվա ընթացքում,** պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

8. Նույն հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝ (...) **առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:**

9. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 954-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի):

10. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել **Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հայտարարագրերը վերլուծելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում**:

11. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

## *VI. Հանձնաժողովի պարտճառաբանություններն ու եզրահանգումը.*

1. Պատգամավորի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումն ամրագրված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով:

2. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը, մասնավորապես, չի արգելում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին որպես սեփականություն ունենալ բաժնեմաս առևտրային կազմակերպությունում: Ավելին, օրենսդիրը չի զրկում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքը օգտագործելու և տնօրինելու իրավունքից, այլ տվյալ պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված՝ նախատեսում է օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն համարվող առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակցության տնօրինման կոնկրետ եղանակ, այն է, պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն (բաժնետոմս, փայ) ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման:

3. Գույքի տնօրինման կոնկրետ եղանակ սահմանելուն զուգահեռ օրենսդիրը հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանել է համապատասխան երաշխիքներ, համաձայն որոնց՝ վերջիններս

հնարավորություն կունենան պաշտոնի նշանակվելուց կամ ընտրվելուց հետո մեկամսյա ժամկետում վերացնելու իրենց զբաղեցրած պաշտոնի հետ անհամատեղելի այլ գործունեությունը, դրանով իսկ բացառելով կամ նվազագույնի հասցնելով հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց մոտ շահերի բախման իրավիճակները: Նման կարգավորումները որևէ կերպ չեն խաթարում անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված, սեփականության հիմնարար իրավունքը, քանի որ անձը, հանձնելով առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման, չի փոխանցում իր սեփականության իրավունքը հավատարմագրային կառավարչին, այլ այդ կերպ իրացնում է իր այդ իրավունքը:

4. Ազգային ժողովի պատգամավորն ունի պետական իշխանության օրենսդիր, ներկայացուցչական մարմնի անդամի սահմանադրաիրավական կարգավիճակ, ինչն անհամատեղելի է գործունեության որոշակի տեսակների հետ: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար օրենսդրությամբ սահմանված որոշակի արգելքների ու սահմանափակումների հիմնական նպատակը ***կոռուպցիայի կանխարգելումն է, այդ թվում՝ շահերի հնարավոր բախման իրավիճակների բացառումը:***

Իրավական սահմանափակումների ներքո ենթադրվում է, որ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավորվում է գործունեություն իրականացնել իր պաշտոնի նկատմամբ սահմանված իրավական որոշակի սահմանափակումների շրջանակներում: Հետևաբար, ընտրվելով հանրային պաշտոնում՝ իրավունքների ու պարտականությունների հետ մեկտեղ պատգամավորը ստանձնում է բազմատեսակ սահմանափակումների ներքո գործելու պարտականություն, որը հետապնդում է խորհրդարանում պատգամավորի կողմից բացառապես օրենսդիր և ներկայացուցչական գործառույթների իրականացման և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց խորհրդարան մուտքը բացառելու ապահովման օրինաչափ նպատակը:

5. Վերլուծելով սույն գործով կիրառելի օրենսդրական կարգավորումները, պարզ է դառնում, որ օրենսդիրը սահմանել է հստակ ժամկետ՝ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու համար, և տվյալ հնարավորությունը սահմանափակել է անձի՝ հանրային

պաշտոնում կամ հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու (ընտրվելու) դեպքով: Այսինքն, օրենսդիրը սահմանել է պայմաններ հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի՝ առևտրային կազմակերպությունում մասնակցությունը ձեռնարկատիրական գործունեություն չհամարվելու համար: Դրանք են՝ երբ անձը մասնակից է եղել առևտրային կազմակերպությանը մինչև պաշտոնի նշանակվելը և, երբ պաշտոնի նշանակելուց հետո առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

6. Այսպես, 2021 թվականի օգոստոսի 2-ից Խաչատուր Սուքիասյանը հանդիսանում է պետական քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, և նրա գործունեության նկատմամբ տարածվում են Սահմանադրության 95-րդ, «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 2-րդ և «Հանրային ծառայության մասին» օրենքի 10-րդ և 31-րդ հոդվածների կարգավորումները: Այսինքն, Խաչատուր Սուքիասյանը պարտավոր էր պաշտոնը ստանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Ընկերության իր բաժնեմասը օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը հարկ է համարում վերոնշյալ փաստերը և դրանց վերաբերելի իրավակարգավորումները վերլուծել օրենքի **ձևական և բովանդակային տեսանկյունից:**

7. Սույն վարույթի շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի ձևական տեսանկյունից խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ տարածվող անհամատեղելիության պահանջները, և դա դրսևորվել է Խաչատուր Սուքիասյանի կողմից պաշտոն ստանձնելուց հետո Ընկերության իր բաժնեմասն օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարման չհանձնելու արարքով: Հանձնաժողովը հարկ է համարում Խաչատուր Սուքիասյանի կողմից կատարված առերևույթ խախտմանն անդրադառնալ Օրենքի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի բովանդակային տեսանկյունից, ուստի և, նշված արարքը անհրաժեշտ է համարում դիտարկել դրա բովանդակային դրսևորումների շրջանակում ՝ գնահատելով սույն գործով ձեռք բերված ապացույցները:

8. Այսպես, սույն վարույթի ընթացքում առկա փաստական տվյալներից պարզ է դարձել, որ Ընկերությունը 2020 թվականից սկսած փաստացի շահույթ չի ստացել, ինչը հաստատվում է Ընկերության հաշվապահական հաշվառման 2020 և 2021 թվականների կարճաժամկետ հաշվետվությունների 188312/10845/2021 Գրասենյակ-Հաշվարկ V.10.39 և 188312/10845/2020 Գրասենյակ-Հաշվարկ V.9.2 փաստաթղթերով՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ:

Նշվածով պայմանավորված, **դեռևս 2021 թվականի հուլիսի 23-ին,** այսինքն Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը ստանձնելուց առաջ, Խաչատուր Ալբերտի Սուքիասյանը կայացրել է որոշում՝ Ընկերության լուծարման վերաբերյալ՝ որպես միանձնյա լուծարող նշանակելով Դոկտ. Վերներ Յանսենին, ինչը հաստատվում է վերջինիս կողմից ներկայացված 23.07.2021 թվականի որոշմամբ: Ինչից հետո, 2021 թվականի օգոստոսի 5-ին Վերներ Յանսենը էլեկտրոնային փոստով դիմել է Գերմանիայի օրենսդրությամբ առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթաց սկսելու իրավասություն ունեցող սուբյեկտին՝ նոտարին, խնդրելով լուծարել Ընկերությունը եկամտի բացակայության պատճառով: Նշված փաստը հաստատվում է պարզաբանմանը կից ներկայացված էլեկտրոնային հաղորդագրության քաղվածքով՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ:

Նոտարը 2021 թվականի հոկտեմբերի 29-ին էլեկտրոնային փոստով դիմել է Վերներ Յանսենին՝ առաջարկելով կցել բոլոր պահանջվող փաստաթղթերը Ընկերության լուծարման համար, ինչի արդյունքում 2022 թվականի մարտի 1-ին Խաչատուր Սուքիասյանը կայացրել է Նոտարի կողմից պահանջվող պայմաններին և ձևաչափին համապատասխանող որոշում՝ «ԻՆ-ԼՈԲԲԻ» ՍՊ ընկերությունը լուծարելու վերաբերյալ: Նշված փաստերը հաստատվում են պարզաբանմանը կից ներկայացված էլեկտրոնային հաղորդագրության քաղվածքով՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ:

Վերջնական արդյունքում, 2022 թվականի մայիսի 12-ին **«ԻՆ-ԼՈԲԲԻ»** ՍՊ ընկերության լուծարումը գրանցվել է Գերմանիայի իրավասու մարմնում՝ Մյոնխենգլադբախի թիվ B14171 Առևտրային ռեգիստրում: Նշված փաստը հաստատվում է պարզաբանմանը կից ներկայացված 239/2022 գրանցման փաստաթղթով՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությամբ, ինչպես

նաև վարույթի իրականացման շրջանակներում Հանձնաժողովի կողմից բաց աղբյուրից ձեռք բերված Ընկերության լուծարման վերաբերյալ տվյալներով (հիմք՝ https://www.northdata.com/?id=5381075958759424 ):

9. Նշվածի համատեքստում, ելնելով պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու օրենսդրական արգելքի վերաբերյալ դրույթների բովանդակային նշանակությունից, ակնհայտ է դառնում,որ էական է արարքում երկու հատկանիշների առկայությունը՝ անձի կողմից իր բաժնեմասնակցության փաստի ուժով համապատասխան գործողությունների կատարմամբ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը և դրա արդյունքում ստացված շահույթի կամ կրած վնասի առկայությունը:

10. Տվյալ պարագայում, սույն վարույթով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Ընկերությունը 2021 և 2022 թվականների ընթացքում փաստացի շահույթ չի ապահովել: Հանձնաժողովը սույն վարույթի շրջանակներում էական է գնահատում նաև այն հանգամանքը, որ Խաչատուր Սուքիասյանի կողմից ձեռնարկվել են համապատասխան քայլեր Ընկերության լուծարման ուղղությամբ դեռևս նրա՝ ՀՀ ազգային ժողովի պատգամավորի մանդատը ստանձնելուց առաջ, և Ընկերության միանձնյա լուծարողի կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքում, դրանք վերջիվերջո հանգուցալուծվել են 2022 թվականի մայիսի 12-ին՝ իրավասու մարմնում Ընկերության լուծարման գրանցմամբ:

Վերոնշյալից հետևում է, որ դեռևս Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը ստանձնելուց առաջ և պաշտոնի ստանձնումից հետո Խաչատուր Սուքիասյանը Ընկերությունում իր բաժնեմասը գործող օրենսդրական իրավակարգավորումներին համապատասխան հավատարմագրային կառավարման չհանձնելու պարագայում փաստացի ձեռնարկատիրական գործունեություն, այն է՝ որոշակի գործողություններ չի իրականացրել, շահույթ չի ստացել: Հանձնաժողովը վարույթի համար էական է համարում այն հանգամանքը, որ առևտրային կազմակերպությանը ձևական առումով մասնակից լինելուն զուգահեռ պաշտոնատար անձի կողմից փաստացի չի պահպանվել նաև իր ազդեցությունն առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ, քանի որ վերջինս, ըստ էության, շահույթ հետապնդող ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացրել, և գտնվել է լուծարման գործընթացում: Հետևաբար, Խաչատուր Սուքիասյանի կողմից

իր ստանձնած պաշտոնի հետ անհամատեղելի գործունեություն փաստացի չի իրականացվել:

Անդրադառնալով Խաչատուր Սուքիասյանի կողմից ձեռնարկված՝ Ընկերության լուծարմանն ուղղված քայլերին, դրանք Հանձնաժողովի մոտ այն համոզմունքն են առաջացնում, որ վարույթի մասնակիցը **բավարար և սպառիչ ջանքեր է գործադրել** փաստացի գործունեություն չծավալող, և շահույթ չստացող Ընկերության լուծարմանն ուղղված քայլեր ձեռնարկելով, այն է՝ **դեռևս պատգամավորի պաշտոնը ստանձնելուց առաջ կայացրել է Ընկերության լուծարման վերաբերյալ որոշում:**

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել **էապես տարբեր փաստական** հանգամանքների նկատմամբ:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ Հանձնաժողովի կողմից 2020 թվականի մարտի 6-ի թիվ 06/2019 եզրակացությամբ հաստատված փաստական հանգամանքների և սույն գործով հաստատված փաստական հանգամանքների միջև էական տարբերություն առկա չէ:

Վերոնշյալ փաստերի վերլուծությունը հանգում է նրան, որ Խաչատուր Սուքիասյանի կողմից բովանդակային առումով չեն խախտվել հանրային պաշտոն զբաղեցնող անձին ներկայացվող անհամատեղելիության պահանջները:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ *սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում* Խաչատուր Սուքիասյանն իր գործողություններով պահպանել է

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի կողմից չեն խախտվել հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության բովանդակային պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԳԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ